Հաստատված է
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Վարչության
12.08.2025 թ. թիվ 152/01-12.08.25 որոշմամբ
Վարչության նախագահ
Ա. Առաքելյան

Հրապարակման ամսաթիվը 13 օգոստոսի 2025թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասն տեղեկատվության համար դիմել Բանկ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
Առաջնային և երկրորդային շուկայից Մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման և ավտոմեքենաների գրավադրմամբ սպառողական վարկերի

ԵՐԵՎԱՆ 2025

ԱՎՏՈՎԱՐԿ (ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ)

<table>
<tr><td>Վարկի տեսակը</td><td>Սպառողական</td></tr>
<tr><td>Վարկի նպատակը</td><td>Առաջնային շուկայից մարդատար ավտոմեքենայի ձեռք բերում (բացառությամբ ՌԴ ազգային արտադրողների կողմից արտադրված)</td></tr>
<tr><td>Վարկի արժույթը</td><td>ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>Վարկի գումարը</td><td>Նվազագույնը՝ 2.000.000 ՀՀ դրամ, Առավելագույնը՝ 20.000.000 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>Տարեկան տոկոսադրույքը ելնելով կանխավճարի չափից և վարկավորման ժամկետից</td><td>Փաստացի տոկոսադրույքը՝ 14.37-17.45%
<table>
<tr><th>Կանխավճար*</th><th>Տարեկան տոկոսադրույք</th><th>Ժամկետ (ամիս)</th><th>Եկամուտների հիմնավորում</th></tr>
<tr><td>10%-ից սկսած</td><td>16.0%</td><td rowspan="4">12-60 ամիս</td><td>Պահանջվում է</td></tr>
<tr><td>30%-ից սկսած</td><td>14.5%</td><td>Պահանջվում է</td></tr>
<tr><td>50% և ավել</td><td>13.5%</td><td>Պահանջվում է</td></tr>
<tr><td>50% և ավել</td><td>16.0%</td><td>Առանց եկամուտների հիմնավորման</td></tr>
</table>
*Hongqi E-QM5 ավտոմեքենան կարող է վարկավորվել բացառապես 30%-ից սկսած կանխավճարի պայմանով:</td></tr>
<tr><td>Մարումների հաճախականությունը</td><td>Ամսական</td></tr>
<tr><td>Վարկի մարման կարգը</td><td>Հավասարաչափ (անուիտետային) կամ ոչ հավասարաչափ (դիֆերենցված)</td></tr>
<tr><td>Ապահովվածությունը</td><td>Ձեռք բերվող ավտոմեքենան</td></tr>
<tr><td>Տրամադրման եղանակը</td><td>Անկանխիկ</td></tr>
<tr><td>Վարկի ձևակերպումն իրականացվում է</td><td>,ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԵ ԲԲԸ մասնաճյուղերի կողմից: Բացառությամբ Սիլաչի, Նաիրի ԲԿ, Ռոսիա-1 և Արարատյան մասնաճյուղերի:</td></tr>
<tr><td>Որոշման և տրամադրման ժամանակահատվածը</td><td>Վարկի որոշման ժամանակահատված՝ դիմումի մուտքագրումից հետո մինչև 25 աշխատանքային օր:
Վարկի տրամադրման ժամանակահատված՝ վարկի դրական որոշման օրվանից մինչև 30 օրացույցային օր:</td></tr>
<tr><td>Վարկառուի նկատմամբ պահանջները</td><td>• 18 տարին լրացած ռեզիդենտ ֆիզիկական անձ,
• Գրանցված և բնակվող Հայաստանի Հանրապետությունում,
• Ունի բանկի համար ընդունելի մշտական եկամտի աղբյուր:</td></tr>
<tr><td>Տույժեր</td><td>Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված գումարների (վարկ, տոկոս, այլ վճարներ) ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տույժ ժամկետանց գումարի 0.13 տոկոսի չափով (օրական):</td></tr>
<tr><td>Ապահովագրությունը</td><td>Առաջնային շուկայից ձեռքբերվող ավտոմեքենան պետք է ապահովագրված լինի ԿԱՍԿՈ ապահովագրության տեսակով վարկի գործողության ամբողջ ժամանակահատվածում: Ավտոմեքենան հաճախորդի կողմից ենթակա է պարտադիր ապահովագրման վարկի գումարից ոչ պակաս չափով (ընդ որում, վարկի տրամադրումից հետո հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պարտադիր ապահովագրման պահանջը կիրառվում է վարկի մնացորդի նկատմամբ) ՀՀ ԿԲ-ի կողմից թույլտվություն /լիցենզիա/ ունեցող ապահովագրական ընկերությունում՝ վարկի պայմանագրային գումարի 2.5%-ի չափով :</td></tr>
</table>

	Վարկի վաղաժամկետ մարման դեպքում ենթակա չէ նվազեցման:
Գրավի ձևակերպման հետ կապված ծախսեր	Գրավի ձևակերպման (պետական գրանցման) հետ կապված ծախսերը կատարվում են վարկառուի կողմից՝ Տրանսպորտային միջոցների գրավի իրավունքի գրանցման համար վճար՝ 2000 ՀՀ դրամ***Վարկի վաղաժամկետ մարման դեպքում ենթակա չէ նվազեցման:***
Դրական որոշման հիմքերը	• Դրական վարկային պատմություն (առկայության դեպքում), • Ներկայացված փաստաթղթերի արժանահավատություն, • Կայուն և բավարար եկամտի աղբյուր, • Բավարար գրավի առկայություն:
Բացասական որոշման հիմքերը	• Հաճախորդի ֆինանսական դրության բացասական գնահատականը, • Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը, • Հաճախորդի բացասական վարկային պատմությունը, • Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կխոչընդոտեն վարկի մարմանը
Քաղվածքի տրամադրում	**Անվճար**
Ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերը	1. Դիմում վարկ ստանալու վերաբերյալ 2. Անձնագրերի պատճեններ 3. Ամուսնության վկայականը և ամուսնու անձնագիրը (առկայության դեպքում) կամ հայտարարություն ամուսնացած չլինելու վերաբերյալ, 4. Տեղեկանք աշխատավայրից եկամուտների վերաբերյալ՝ տրված առավելագույնը 20 օրացույցային օրվա վաղեմությամբ 5. Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ, 6. Ավտոմեքենայի ապառիկ ձեռք բերման պայմանագրի պատճենը և վաճառքն իրականացնող ընկերության կողմից կազմված հայտը, որտեղ նշվում է ձեռք բերվող ավտոմեքենայի(ների) մակնիշը, գինը և քանակը, 7. Ավտոմեքենայի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ տրված պետական լիազոր մարմնի կողմից (վարկի տրամադրման որոշման կայացումից հետո), 8. Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր ըստ Բանկի պահանջի:

Ուշադրություն.Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:
Ուշադրություն.Որպես վարկի լրացուցիչ ապահովման միջոց Բանկը կարող է պահանջել նաև այլ անձի/անձանց երաշխավորությունը (ները):
Ուշադրություն.Առաջնային շուկայից ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով տրամադրվող վարկերի կոշտ գրավի պայմանագրերը պետք է վավերացվեն նոտարական կարգով:
Ուշադրություն.Ելնելով տարաբնույթ հանգամանքներից, կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:
Ուշադրություն. Սպառողն/վարկառուն/ իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում սպառողը պարտավոր է կրեդիտի գումարը օգտագործելու համար կրեդիտավորողին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են կրեդիտավորման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Կրեդիտավորման պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում սպառողից պահանջվել չի կարող:
Ուշադրություն: Տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ:
Ուշադրություն: Վարկ ստանալու համար դիմելիս Բանկը Ձեզ տրամադրում է սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված է Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները: (Մինչև 15.000.000 ՀՀ դրամին համարժեք վարկերի դեպքում):
Ուշադրություն: <<Ձեր ֆինանսական տեղեկատուն>> ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է՝ https://www.fininfo.am/avto-vark
Ուշադրություն. Վարկային գործառնությունների իրականացման շրջանակներում մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագներին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/uploads/varkayin_sakangneri_havelvac.pdf

Ուշադրություն: Պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրման պայմաններին, ժամկետներին և սակագներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/hy/bankayin_hashiv :

ԱՎՏՈՎԱՐԿ (ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ)

Վարկի տեսակը	Սպառողական
Վարկի նպատակը	Երկրորդային շուկայից մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում և ավտոմեքենաների գրավադրում (բացառությամբ ՌԴ ազգային արտադրողների կողմից արտադրված)
Վարկի արժույթը	ՀՀ դրամ
Վարկի գումարը	Նվազագույնը՝ 2.000.000 ՀՀ դրամ,Առավելագույնը՝ 20.000.000 ՀՀ դրամ
Տարեկան տոկոսադրույքը	**Փաստացի տոկոսադրույքը՝** 17.32-19.13%:

Տարեկան տոկոսադրույքը ելնելով կանխավճարի չափից և վարկավորման ժամկետից

Ձեռքբերվող/ գրավադրվող ավտոմեքենա	Կանխավճար, Վարկ/գրավ հարաբերակցություն	Տարեկան տոկոսադրույք	Ժամկետ	Եկամուտների հիմնավորում	Համավարկառուի պահանջ
Երկրորդային շուկայից 15 տարվա վաղեմությամբ արտադրված մարդատար ավտոմեքենա	Կանխավճար՝ 30%-ից սկսած, Վարկ/գրավ հարաբերակցություն՝ մինչև 70%	16.0%	12-24 ամիս	Պահանջվում է	մեկ համավարկառու
	Կանխավճար՝ 40%-ից սկսած, Վարկ/գրավ հարաբերակցություն՝ մինչև 60%	16.0%	12-48 ամիս	Պահանջվում է	մեկ համավարկառու

Վարկի մարման կարգը և մարումների հաճախականությունը	Ամենամսյա՝ հավասարաչափ (անուիտետային) կամ ոչ հավասարաչափ (դիֆերենցված)
Ապահովվածությունը	Ձեռք բերվող կամ գրավադրվող ավտոմեքենա
Տրամադրման եղանակը	Անկանխիկ
Կանխիկացման վճար	Վարկի գումարի կանխիկացման դեպքում, գանձվում է կանխիկացման վճար՝համաձայն բանկում գործող սակագների*:
Վարկի ձևակերպումն իրականացվում է	,ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ մասնաճյուղերի կողմից: **Բացառությամբ Սիլաչի, Նաիրի ԲԿ, Ռոսիա-1 և Արարատյան մասնաճյուղերի:**
Որոշման և տրամադրման ժամանակահատվածը	Վարկի որոշման ժամանակահատված՝ դիմումի մուտքագրումից հետո մինչև 25 աշխատանքային օր: Վարկի տրամադրման ժամանակահատված՝ վարկի դրական որոշման օրվանից մինչև 30 օրացույցային օր:
Վարկառուի նկատմամբ պահանջները	• 18 տարին լրացած ռեզիդենտ ֆիզիկական անձ, • Գրանցված և բնակվող Հայաստանի Հանրապետությունում, • Ունի բանկի համար ընդունելի մշտական եկամտի աղբյուր:
Տույժեր	Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված գումարների (վարկ, տոկոս, այլ վճարներ) ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տույժ ժամկետանց գումարի 0.13 տոկոսի չափով (օրական):
Ապահովագրությունը	Երկրորդային շուկայից ավտոմեքենաների ձեռք բերման նպատակով և ավտոմեքենաների գրավադրմամբ տրամադրվող վարկերի դեպքում ձեռքբերվող/գրավադրվող ավտոմեքենան պետք է ապահովագրված լինի ԿԱՍԿՈ ապահովագրության տեսակով վարկի գործողության ամբողջ ժամանակահատվածում: Ավտոմեքենան հաճախորդի կողմից ենթակա է պարտադիր ապահովագրման վարկի գումարից ոչ պակաս չափով (ընդ որում, վարկի տրամադրումից հետո հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պարտադիր ապահովագրման պահանջը կիրառվում է վարկի մնացորդի նկատմամբ) ՀՀ ԿԲ-ի կողմից թույլտվություն /լիցենզիա/ ունեցող ապահովագրական ընկերությունում՝

	վարկի պայմանագրային գումարի 2.5%-ի չափով: Առաջին տարվա համար ապահովագրության վճարը Հաճախորդը պետք է կատարի մինչ վարկի տրամադրումը, իսկ հաջորդող տարիների համար՝ Հաճախորդի ամենամսյա վճարումների հաշվին: ***Վարկի վաղաժամկետ մարման դեպքում ենթակա չէ նվազեցման*:**
Գնահատումը	Կատարվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզիա ունեցող ցանկացած գնահատող կազմակերպության կողմից՝ վերջինիս կողմից սահմանված սակագնով՝ 15.000 ՀՀ դրամ մեկ ավտոմեքենայի համար: ***Վարկի վաղաժամկետ մարման դեպքում ենթակա չէ նվազեցման*:**
Գրավի ձևակերպման հետ կապված ծախսեր	Գրավի ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը (նոտարական վավերացում, գրավի պետական գրանցում) կատարվում են վարկառուի կողմից՝ • Նոտարական վճար՝ 12.000 ՀՀ դրամ, • Տրանսպորտային միջոցների գրավի իրավունքի գրանցման համար վճար՝ 2000 ՀՀ դրամ: Երկրորդային շուկայից ավտոմեքենաների ձեռք բերման նպատակով և ավտոմեքենաների գրավադրմամբ տրամադրվող մինչև 6.000.000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով վարկերի գրավի պայմանագրերը կարող են կնքվել առանց նոտարական վավերացման պարտադիր պահանջի: ***Վարկի վաղաժամկետ մարման դեպքում ենթակա չէ նվազեցման*:**
Քաղվածքի տրամադրում	**Անվճար**
Դրական որոշման հիմքերը	• Դրական վարկային պատմություն (առկայության դեպքում), • Ներկայացված փաստաթղթերի արժանահավատություն, • Կայուն և բավարար եկամտի աղբյուր, • Բավարար գրավի առկայություն:
Բացասական որոշման հիմքերը	• Հաճախորդի ֆինանսական դրության բացասական գնահատականը, • Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը, • Հաճախորդի բացասական վարկային պատմությունը, • Այլ պատճառներ, որոնք Բանկի գնահատմամբ կխոչընդոտեն վարկի մարմանը
Ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերը	1. Դիմում վարկ ստանալու վերաբերյալ 2. Անձնագրերի պատճեններ 3. Ամուսնության վկայականը և ամուսնու անձնագիրը (առկայության դեպքում) կամ հայտարարություն ամուսնացած չլինելու վերաբերյալ, 4. Տեղեկանք աշխատավայրից եկամուտների վերաբերյալ' տրված առավելագույնը 20 օրացույցային օրվա վաղեմությամբ 5. Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ, 6. Պետական լիազոր մարմնի կողմից տրված ավտոմեքենայի սեփականության վկայականը և պետական հաշվառման վկայագիրը, 7. Ավտոմեքենայի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք' տրված պետական լիազոր մարմնի կողմից (վարկի տրամադրման որոշման կայացումից հետո), 8. Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր ըստ Բանկի պահանջի:

Ուշադրություն: Տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ:
Ուշադրություն.Վարկի վաղաժամկետ մարում թույլատրվում է, որի համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:
Ուշադրություն.Որպես վարկի լրացուցիչ ապահովման միջոց Բանկը կարող է պահանջել նաև այլ անձի/անձանց երաշխավորությունը (ները):
Ուշադրություն.Ելնելով տարաբնույթ հանգամանքներից, կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:
Ուշադրություն. Սպառողն/վարկառուն/ իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում սպառողը պարտավոր է կրեդիտի գումարը օգտագործելու համար կրեդիտավորողին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են կրեդիտավորման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին

համապատասխան: Կրեդիտավորման պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում սպառողից պահանջվել չի կարող:
Ուշադրություն.Երկրորդային շուկայից ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով և ավտոմեքենաների գրավադրմամբ տրամադրվող վարկերի կոշտ գրավի պայմանագրերը պետք է վավերացվեն նոտարական կարգով:
Ուշադրություն: Վարկ ստանալու համար դիմելիս Բանկը Ձեզ տրամադրում է սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված է Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները: (Մինչև 15.000.000 ՀՀ դրամին համարժեք վարկերի դեպքում):
Ուշադրություն: <<Ձեր ֆինանսական տեղեկատուն>> ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է ՝ https://www.fininfo.am/avto-vark :
Ուշադրություն. Վարկային գործառնությունների իրականացման շրջանակներում մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագներին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/uploads/varkayin_sakangneri_havelvac.pdf
Ուշադրություն: Պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրման պայմաններին, ժամկետներին և սակագներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/hy/bankayin_hashiv :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Գրավի գնահատումն իրականացվում է անկախ գնահատող լիցենզավորված ընկերությունների կողմից, վերջիններիս կողմից սահմանված սակագներով:
Գնահատող ընկերություններն են՝

Անուն	Հասցե	Հեռախոսահամար
,ԱՆՏ ՌԻԵԼԹԻԵ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան,Կենտրոն, Տիգրան Մեծի պող., շենք 49	(096) 52 25 40 (077) 52 25 46
,ԷՍԹԵՅԹԵ ՍՊԸ	ք.Երևան,Տիգրան Մեծի պող 49	041-77-41-00
ՀՀ ԱԱՊ ,ԱՐՄԵՔՍՊԵՐՏԻԶԱԵ ՍՊԸ	ք.Երևան, Գարեգին Նժդեհի փող. 26	010-44-34-36, 010-44-28-48
,ՎԻ ԷՄ-ԱՐ ՓԻԵ ՍՊԸ	ք.Երևան,Վարդանանց փող. 8	010-58-87-97, 099-58-87-97
,ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊԵ ՍՊԸ	ք.Երևան,Արցախի պող. 23/6 շենք	010-43-22-76, 096-43-22-76
,Ար Վի Էմ Քոնսալտե ՍՊԸ	ք.Երևան,Նալբանդյան փող. 48/1 շենք 2-րդ հարկ	010-54-64-90,098-94-44-49
,Օլիվեր Գրուպե ՍՊԸ	ք.Երևան, Թումանյան 8, 215-216	010 54 27 40, 010 54 27 50, 010 54 27 60, 077/091/055 54 27 50

Ապահովագրությունը իրականացվում է վարկի գումարի կամ գույքի շուկայական արժեքի չափով, ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերություններում, վերջիններիս կողմից սահմանված սակագներով:
Ապահովագրական ընկերություններն են՝

Անուն	Հասցե	Հեռախոսահամար
"ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ" ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5	(060) 54-00-00, (060) 50-55-44, (010) 58-00-00
,Ինգո Արմենիաե ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք՝ 47, 48, 50	(010) 59 21 21
,ՌԵՍՈԵ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան,Կոմիտասի պող., 62 շենք	(060) 27 57 57, (098) 56 07 97

Ուշադրություն: Բանկը <<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին>> ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից <<Ճանաչիր քո հաճախորդին>> (<<Know your customer>>) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին:
Ուշադրություն: ֆինանսական կազմակերպությունների կողմից կնքված պայմանագրերի, համաձայնագրերի, համագործակցությունների, կամ անդամակցությունների վերաբերյալ, որոնք ուղղակի ազդեցություն կարող են ունենալ սպառողների վրա (օրինակ՝ ,Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրումե:
Ուշադրություն: Վարկ ստանալու համար դիմելիս Բանկը Ձեզ տրամադրում է սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված է Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները: (Մինչև 15.000.000 ՀՀ դրամին համարժեք վարկերի դեպքում):
Ուշադրություն.Որպես վարկի լրացուցիչ ապահովման միջոց Բանկը կարող է պահանջել նաև այլ անձի/անձանց երաշխավորությունը(ները) և/կամ համավարկառու:
Ուշադրություն՝ ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վարկատուն մինչև 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ տվյալները ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձեվավորվում է ձեր վարկային պատմությունը: դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել ձեր վարկային պատմությունը(https://acra.am/?lang=hy):
Ուշադրություն ՝ վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

Ուշադրություն՝ ***վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները եվ այլ վճարները սահմանված ժամկետներում եվ չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգին կարող եք ծանոթանալ սույն հղմամբ՝***

https://www.aeb.am/media/2019/06/2640.pdf :

Այն վճարները, որոնք սպառողի կողմից ենթակա են վճարման՝ անկախ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների դիմաց վճարումները կրեդիտով կամ առանց կրեդիտի կատարելու հանգամանքից փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառված չեն:

Ուշադրություն՝ վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել բանկի կողմից: Անվանական տոկոսադրույքի փոփոխման վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ սույն հղմամբ՝ https://www.aeb.am/media/2019/05/2631.pdf :

1.դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից եվ ապահովում է գաղտնիություն:

2.պարտավորությունների չկատարման դեպքում հաճախորդի համար հնարավոր բացասական հետեվանքներ տույժ/տուգանքներ
- չվճարված վարկի ժամկետանց գումարի 0,13%-ի չափով՝ օրական
-չվճարված ժամկետանց տոկոսագումարի 0,13%-ի չափով՝ օրական:

3. եթե վարկատուի նկատմամբ ունեք չմարված պարտավորություն, ապա ձեր կողմից պարտավորությունները կատարելու ժամանակ մարումները իրականացվում են հետեվյալ հերթականությամբ:
դատական ծախսեր /առկայության դեպքում/
գրավի իրացման ծախսեր /առկայության դեպքում/
- տույժեր
- տոկոսներ
- ապահովագրավճարներ /առկայության դեպքում/
- վարկի մայր գումար:

4. ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք ձեր տոկոսագումարների եվ մայր գումարի մարումները:

5.վարկային պարտավորությունների չկատարման եվ գրավի հաշվին վարկային պարտավորությունները մարելու դեպքում՝ գրավը բավարար չլինելու պարագայում, հնարավոր է պարտավորությունների մարում վարկառուի եվ/կամ երաշխավորի(ների)/համավարկառուի/ների/ այլ գույքի հաշվին:

6.վարկերի տոկոսագումարները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ:
Օրինակ՝ Եթե հաճախորդին տրամադրվել է 1.200.000 ՀՀ դրամ վարկ, տարեկան 24% տոկոսադրույքով, 12 ամիս ժամկետով (ամսեկան տոկոսների հաշվարկի ժամանակ օրերի քանակ հիմք է ընդունվել 30 օր ժամանակահատվածը):

Ամիսներ	Վարկի մնացորդ	Վճարում վարկից	Վճարում տոկոսից
1	1.200.000	100.000	23.671
2	1.100.000	100.000	21.699
3	1.000.000	100.000	19.726
4	900.000	100.000	17.753
5	800.000	100.000	15.781
6	700.000	100.000	13.808
7	600.000	100.000	11.836
8	500.000	100.000	9.863
9	400.000	100.000	7.890
10	300.000	100.000	5.918
11	200.000	100.000	3.945
12	100.000	100.000	1.973

7.ՀԻՇԵՑՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ:

8.Տրամադրվող վարկի մեծության որևէ սահմանափակում բանկի կողմից չի կիրառվում, այն պայմանավորված և կապակցված է.

- Վարկի նպատակից,
- Հաճախորդի վարկունակությունից,
- Հաճախորդի կողմից առաջարկվող վարկի ապահովվածությունից,
- Վարկային ռիսկի գնահատումից,
- ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված նորմատիվային դաշտի պահանջներից:

9.,ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ հաճախորդին կարող է մատուցել ծառայություններ Բանկի ընդհանուր քաղաքականությամբ սահմանված պայմաններից տարբերվող պայմաններով՝ հաշվի առնելով ստորև ներկայացված ցանկի պայմաններից որևէ մեկը.

- *Հաճախորդի հաշվի մնացորդը,*
- *Հաճախորդի հաշվի շարժը,*
- *Բանկի համար հաճախորդի ռազմավարական նշանակությունը,*
- *Հաճախորդ կազմակերպության աշխատակիցների քանակը,*
- *Հաճախորդ կազմակերպությանը տրամադրված քարտերի ընդհանուր քանակը,*
- *Բանկին բերված եկամուտը,*
- *Փոխանցումների ծավալը,*
- *Բանկում ներդրված ավանդների մեծությունը,*
- *Խոշոր վարկառու հանդիսանալը,*
- *Սոցիալական նկատառումները (ուսումնական հաստատություններ բժշկական կազմակերպություններ և այլն),*
- *Վերոնշյալ կազմակերպությունների ղեկավար հանդիսանալ,*
- *Այլ օբյեկտիվ պայմաններ:*

10.Վարկի օգտագործման համար վարկառուն բանկին վճարում է տոկոս, որի հաշվարկը կատարվում է վարկի մնացորդի նկատմամբ, վարկի տրամադրման օրվանից՝ փաստացի օգտագործված օրացուցային օրերի համար՝ տարին ընդունելով 365 օր: Առանձին ծրագրերի շրջանակներում վարկավորման դեպքում տարին կարող է ընդունվել 360 օր:

- *Տոկոսագումարները վճարվում են վարկային պայմանագրում նշված ժամկետներում:*
- *Տոկոսների վճարման պարբերականությունը սահմանավում է վարկային պայմանագրի կամ մարման գրաֆիկի համաձայն:*
- *Եթե վարկի կամ հաշվարկված տոկոսների մարման օրը համընկնում է հանգստյան օրերի հետ, վճարումը կատարվում է հաջորդող աշխատանքային օրերին՝ հանգստյան օրերի համար չհաշվարկելով տույժ:*

11.Վարկային պարտավորության մարումները

- *Վարկերը մարվում են այն ժամկետներում, որոնք նշված են վարկային պայմանագրում,*
- *Վարկերը մարվում են այն արժույթով, որով ձևակերպվել են,*
- *Արտարժույթային վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա,*
- *Արտարժույթի փոխարժեքի փոփոխության դեպքում արտարժույթով տրամադրած վարկերի գծով փոխարժեքի փոփոխության ազդեցության ռիսկը կրում է վարկառուն:*

12. Բանկը կարող է դադարեցնել վարկային պայմանագրի գործողությունը և ետ պահանջել վարկի գումարը, եթե.

- *Վարկառուն թերանում է կատարել վարկային պայմանագրով նախատեսված որևէ վճար,*
- *Վարկառուն խախտում է իր կողմից կատարված որևէ հավաստիացում ու չի վերացնում այդ խախտումը դրա առաջացումից հետո 30 օրվա ընթացքում,*
- *Եթե պարզվում է, որ վարկառուի կողմից տրված որևէ ներկայացում, երաշխիք, փաստաթուղթ կամ տեղեկություն էապես թերի է,*
- *Եթե բանկի հիմնավորված գնահատականով տեղի է ունեցել վարկառուի ֆինանսական վիճակի էական բացասական փոփոխություն, ներառյալ՝ դատական պահանջներ, ակտիվների արտահոսք, բիզնեսի վատթարացում կամ դադարեցում, ընկերության վերակազմավորում,*
- *Եթե վարկառուն լուծարվում է և նրա նկատմամբ սկսված է կամ վերահաս է սնանկության գործընթաց,*

- *Եթե վարկառուն խոչընդոտում է մոնիտորինգի անցկացմանը,*
- *Այլ օբյեկտիվ պատճառների դեպքում:*

13.Բանկի համար որպես գրավի առարկա կարող է հանդիսանալ.

- *Անշարժ գույք՝ հողամասեր, շենքեր, շինություններ, բնակարաններ, առանձնատներ,*
- *Հիմնական միջոցներ,*
- *Շրջանառու միջոցներ,*
- *Ավտոմեքենաներ,*
- *Թանկարժեք մետաղներ,*
- *Պետական պարտատոմսեր, արտարժույթ, բաժնետոմսեր,*
- *Ապագայում ձեռք բերվելիք գույքը եւ իրավունքի գրավը,*
- *Դրամական միջոցներ:*

14.Գրավադրվող շարժական և անշարժ գույքի համար որպես գնահատման արժեք հիմք է ընդունվում գնահատման հաշվետվությունում առկա շուկայական արժեքը:

15.Վարկը կամ դրա մի մասը, ինչպես նաև հաշվարկված տոկոսագումարները համարվում են ժամկետանց, եթե պայմանագրով նախատեսված ժամկետներում չեն մարվել:

- Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված գումարների (վարկ, տոկոս, այլ վճարներ) ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար Վարկառուն պարտավոր է վճարել Բանկին տույժ՝ ժամկետանց գումարի 0.13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսի չափով: Սույն կետի համաձայն հաշվարկված և չվճարված տույժի հանրագումարը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա վարկի պարտքի մնացորդը:
- Պայմանագրով սահմանված ժամկետ/ներ/ում չվճարված վարկի (մասի) նկատմամբ Վարկառուն պարտավոր է վճարել Բանկին տոկոսներ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով: Սույն կետի համաձայն հաշվարկված և չվճարված տոկոսների հանրագումարը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա վարկի պարտքի մնացորդը:
- Անընդմեջ ժամկետանց օրերի 91-րդ օրվանից սկսած ոչ ժամկետանց վարկի (ժամկետային վարկ) մնացորդի նկատմամբ կիրառվում է տարեկան **21.5** % տոկոսադրույք: Ժամկետանց գումարները և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերը, տոկոսները ամբողջությամբ վճարելու հաջորդ օրվանից ժամկետային վարկի նկատմամբ վերականգնվում է Վարկային պայմանագրով սահմանված տոկոսադրույքը:

16. Բանկի համար գրավի առարկա չի կարող հանդիսանալ.

- *Շրջանառությունից հանված գույքը,*
- *Անբաժանելի գույքի առանձին մասերը,*
- *Վարձակալության իրավունքը,*
- *Այլ պայմանագրով արդեն գրավադրված գույքը քաղաքային, գյուղական և թաղային համայնքների:*

17. *<u>ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻ պահանջները բավարարելու նպատակով գրավ դրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում կարող է տարածվել ԳՐԱՎԱՏՈՒԻ՝ Գրավի պայմանագրով, և ՎԱՐԿԱՌՈՒԻ՝ Վարկային պայմանագրով նախատեսված պարտավորություններն իրենց պատասխանատվության շրջանակներում չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՛ սույն կանոնների 2-4 կետերի համաձայն:</u>*

2. Արտադատական կարգով գրավադրված գույքն իրացվում է, եթե Գրավի պայմանագրով ԳՐԱՎԱՏՈՒՆ տալիս է իր համաձայնությունը և իրավունք է վերապահում ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻՆ սույն կանոնների 1 կետում նշված բռնագանձման հիմքերն ի հայտ գալու դեպքում գրավադրված անշարժ գույքն իրացնել առանց դատարան դիմելու և իրացման հաշվին բավարարել գրավով ապահովված պահանջն ամբողջ ծավալով, ինչպես նաև՝ գրավադրված անշարժ գույքն առանց դատարան դիմելու հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց ի սեփականություն հանձնել ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻՆ կամ վերջինիս կողմից նշված անձին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. *<u>Սույն կանոնների 1 կետում նշված բռնագանձման հիմքերն ի հայտ գալու դեպքում ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒՆ գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է ԳՐԱՎԱՏՈՒԻՆ գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու մասին (բռնագանձման ծանուցում): Բռնագանձման ծանուցումը ԳՐԱՎԱՏՈՒԻՆ հանձնելուց երկու</u>*

ամիս հետո ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒՆ իրավունք ունի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ ԳՐԱՎԱՏՈՒԻ անունից իրացնելու գրավադրված գույքն ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով՝ ,Հրապարակային սակարկությունների մասինե ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4. Բռնագանձման ծանուցումը ԳՐԱՎԱՏՈՒԻՆ հանձնելուց երկու ամսվա ընթացքում ԳՐԱՎԱՏՈՒՆ պարտավորվում է գրավադրված գույքը հանձնել ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻՆ:

5. Գրավադրված գույքի իրացման գործընթացի տևողությունը չի կարող հիմք հանդիսանալ Վարկային պայմանագրով ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻ նկատմամբ ստանձնած ՎԱՐԿԱՌՈՒԻ պարտավորությունների աճի դադարեցման համար: Ընդ որում՝ գրավի առարկայի իրացման գումարի հաշվին մարվում են գրավի առարկայի իրացման օրվա դրությամբ ՎԱՐԿԱՌՈՒԻ նկատմամբ ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻ ունեցած ողջ պահանջներն իրենց ամբողջ ծավալով, իսկ գրավի հաշվին պահանջը չբավարարվելու դեպքում՝ մնացորդ գումարները կարող են բռնագանձվել ՎԱՐԿԱՌՈՒԻ այլ գույքից:
6. ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒԻ պահանջները բավարարելու նպատակով գրավ դրված գույքի նկատմամբ դատական կարգով բռնագանձում կարող է տարածվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

18.Յուրաքանչյուր ծառայության գծով սակագներին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/hy/sakagner/ :

19.Հեռահար սպասարկման ծառայություններին, պայմաններն և կարգին կարող եք ծանոթանալ անցնելով հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/hy/mobile_banking/

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: